ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/71

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9249-2019 գրությամբ «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 30.05.2019թ. թիվ 08/15.3/7034-19 գրության հիման վրա, 04.06.2019թ. «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 30.05.2019թ. թիվ 08/15.3/7034-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի միջև 06.03.2019թ. «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն-4» և 15.04.2019թ. կնքվել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-2» ծածկագրերով պետական գնման պայմանագրեր:

Նշված կազմակերպությունը պայմանագրերով սահմանված ժամկետներում չի կատարել իր պարտավորությունները, ինչի արդյունքում Նախարարությունը՝ հիմք ընդունելով կնքված պայմանագրերի 2.1.3 կետի դրույթները, միակողմանի լուծել է վերոհիշյալ պայմանագրերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.06.2019թ. գրությամբ դիմել է «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9249-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/71 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի միջև 06.03.2019թ. «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն-4» և 15.04.2019թ. կնքվել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-2» ծածկագրերով պետական գնման պայմանագրեր (այսուհետ նաև՝ Պետական գնման պայմանագրեր կամ Պայմանագիր N 1Ն-4 և Պայմանագիր N 7Ն-2):

Պետական գնման պայմանագրեր հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 40 (քառասուն) օր:

28.03.2019թ.-ին կնքված N 1Ն-4 Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 համաձայնագրի 2.1 կետի համաձայն՝ սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N 1Ն-4 Պայմանագրի անբաժանելի մասը:

15.04.2019թ.-ին կնքված N 7Ն-2 Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 համաձայնագրի 2.1 կետի համաձայն՝ սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 7Ն-2 Պայմանագրի անբաժանելի մասը:

www.gnumner.am համացանցային կայքում 27.05.2019թ. հրապարակված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն-4» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի միջև 06.03.2019թ.-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն-4» ծածկագրով պայմանագիրը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից 27.05.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2019 թվականի մարտի 6-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն-4» ծածկագրով գնման

պայմանագրի շրջանակներում Ընկերությունը մինչև 2019 թվականի մայիսի 7-ը պետք է իրականացներ ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհամայնքային երկու փողոցների 2,1 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ, ինչը պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել:

www.gnumner.am համացանցային կայքում 27.05.2019թ. հրապարակված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-2» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ տրանպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի միջև 15.04.2019թ.-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-2» ծածկագրով պայմանագիրը ՀՀ տրանպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից 27.05.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-2» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը մինչև 2019 թվականի մայիսի 15-ը պետք է իրականացներ Մ-1,Երևան-Գյումրի-Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման,Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ278+400-կմ279+727 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման,ծախսերի գնահատման աշխատանքներ, ինչը պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9249-2019 գրությամբ «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է

պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված աշխատանքը

(այսուհետ՝ աշխատանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել աշխատանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի Աշխատանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ «Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը»: Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե աշխատանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դրսևորած

անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պետական գնման պայմանագրերի դրույթները, միակողմանիորեն լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 27.05.2019թ.-ին հրապարակելով պայմանագրերի միակողմանի լուծման մասին ծանուցումները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ն, խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9249-2019 գրությամբ «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**